600.0038.15.02.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

15 փետրվարի 2017 թվականի №38Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի №298Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների 1-ին մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի հունվարի 31-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 9-ի «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Այրք ՓՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №298Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0358 լիցենզիայով (այսուհետ՝ №0358 լիցենզիա) ամրագրված վերակառուցման ժամանակահատվածը՝ Որոշման մեջ «մինչև 2017 թվականի փետրվարի 22-ը» բառերը փոխարինելով «մինչև 2017 թվականի դեկտեմբերի 22-ը» բառերով:

2. «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ №0358 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Այրք ՓՀԷԿ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի վերակառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի №3467/08 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված և 2015 թվականի №1853/08 և 2016 թվականի հունիսի 6-ի №1781/08 գրություններով գործողության ժամկետը երկարաձգված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված հինգ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր դրամ գումարից երկու հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր հիսուն դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել հինգ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2018 թվականի փետրվարի 5-ը գործողության ժամկետով:

3. «Լուսակունք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի փետրվարի 22-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
15 փետրվարի 2017թ.